իմ զԱՂԹՈՒՆ, որ թարգմանի Ոսկի, և զամենայն արեան մերձաւորսն իմ, և զուսուցիչն իմ զՏէր Յակոբ քահանայն, և զՏէր Յակոբ կրօնաւորն՝ որ չնորհեաց զսա։... [Աստուծաշունչ ի կայսեր. գրատան Վիեննայ]։

1609·

Գրեցաւ գիրս ձեռամբ Թորոս դպրի որդւոյ Մեթքոյին. Թվին ՌԾԸ. Ո՛վ եղբայրք, յիշեցէք զմեղաւոր գրչակս։ [Ժամագիրք, ի Ս. Ղազար]։

1610·

Ես անարժան Յակոբ երէց Եազլովացի, Թվին ՌԾԸ, սեպտ. 4, փոխարկեցի զԽոստովանութիւնս ի քաղաքն Կամենից. Նորընծայ էի, և ի մէջ քառասնից որ գրեցի զսա. ինձ մեղաւորիս՝ Աստուած ողորմի ասացէք վասն Աստուծոյ սիրուն։

1610·

Գրեցաւ Պատարագատետրս ի լաւ և ընտիր օրինակէ՝ ձեռամբ անարժան և անարհեստ Աստուածատուր դպրի, որ եմ որդի Տէր Յակոբին, ի քաղաքն Կամենից, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նիկողայոսին. ի վայելումն Նորընծայ Տէր Ղազարին, և յիշատակ Եազլովիցու Հաճկատար Ս. Աստուածածնին։ Ով սրբասնեալ քահանայք, յորժամ որ կարդայք կամ օրինակէք, յիշեցէք զիս և զիմն ամենայն՝ ի դէմ սոսկալի սուրբ պատարագին։ Աւարտեցաւ Թվ. ՌԾԸ. սեպտեմ. 28։ [Պատարագամեկն. Յով. Արձիշեցւոյ. ի Ս. Ղազար]։

1613·

Անուանի գիրքս Ճաշոց, զի հանապազօր ի ճաշոյն ընթեռնի, այլ և կոչի Տարէգիրք, զի զբոլոր տարին ընթերցուածսն յինքն ունի... Յիշեսջիք... զզաւակսն իմ և զամենայն արեան մերձաւորսն իմ. նա և զստացող գրոցս զԻլովցի Պր. Պէռնատն՝ Պր. Թորոսի որդին. որ ստացաւ զսա ի հալալ արդեանց և յարդար վաստակոց իւրոց, և ետ յիշատակ անջինջ Զամոսցա քաղաքիս Ս. Աստուածածնի եկեղեցւոյս, վասն հոգոյ իւրոյ և վասն ծնողաց իւրոց. և ինքն ի յայսմ ամի վախճանեցաւ ի Քրիստոս մանուկ տիօք երիտասարդական հասակին, և մեծ կսկիծ հասոյց ծնողացն։.. Աղաչեմ զձեզ, ով ընթերցող եղբարք իմ, որ մեղադիր չլինիք խոշորութեան և սխալանաց և անյարմարութեան գրոյս. զի պէսպէս վշտաք և չարչարանաք գրեցի. զի ի ՌԾԲ Թվին սկսայ և ԿԲին բոլն ի յաւարտն հասայ. վասն որոյ խնդրելով աղաչեմ զձեզ որ խնայելով բռնէք զգիրս, և զմեզ անպարսաւ թողուք. մանաւանդ թէ յիշելոյ առնել արժանի։.. [Կայսեր. գրատուն Վիեննայ]։